ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1254-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2008.11.19/68(658) Հոդ.1189	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	30.10.2008
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	07.11.2008
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	29.11.2008	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՎԱՐՊԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ) ՁԵՎԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2008 թվականի N 1254-Ն

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՎԱՐՊԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ) ՁԵՎԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ, 12-րդ հոդվածի 1-ին և 15-րդ հոդվածի 11-րդ մասերի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձևերով ուսուցման մասնագիտությունների ցանկը և կարգը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2008 թ. նոյեմբերի 7
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1254-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՎԱՐՊԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ) ՁԵՎԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դասիչը	Մասնագիտությունների խումբը, մասնագիտությունը	Որակավորումը
1	2	3
0500	**Արվեստ և դիզայն**	
0514	Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն	Նկարիչ-ապակեպատող
		Ցուցափեղկեր ձևավորող
		Գեղարվեստական ձևավորող
		Սանրվածքներ ցուցադրող
		Հագուստների ցուցադրող (մոդել)
		Ծաղկի գեղարվեստական ձևավորող
		Միջոցառումների սրահների ձևավորող
		Սեղանի ձևավորող
0515	Զարդակիրառական արվեստ	Ասեղնագործ-ժանեկագործ (ձեռագործ)
		Բրուտագործ
		Խեցեգործական գեղարվեստական իրեր պատրաստող
		Փայտյա գեղարվեստական իրեր պատրաստող
		Կաշվե գեղարվեստական իրեր պատրաստող
		Քանդակագործ-դրվագող
		Փայտի գեղարվեստական փորագրող
		Մետաղի գեղարվեստական փորագրող
		Ոսկերիչ
		Քարի գեղարվեստական փորագրող
		Ոսկրի գեղարվեստական փորագրող
		Գորգագործ
		Գոբելենագործ
		Մանրանկարիչ
		Կիսաթանկարժեք և թանկարժեք քարեր մշակող
		Հախճապակյա իրեր նկարազարդող
		Դերձակ-մոդելավորող
0900	**Օգտակար հանածոների արդյունահանում**	
0901	Հանքարդյունաբերական մեքենաների և սարքավորումների շահագործում	Մաքրման հանքախորշի լեռնագործ
		Լեռնարդյունաբերական մեքենաների մեքենավար
0904	Օգտակար հանածոների հարստացում	Խտացուցիչների ապարատավար
		Չափաքանակ որոշող
		Ջարդող մեքենավար
		Աղացող մեքենավար
		Կառավարման վահանակի օպերատոր
		Չորացնող մեքենավար
		Քամող մեքենավար
		Հարստացնող
		Գոլորշացման ապարատավար
		Հատիկավորման ապարատավար
0907	Հետախուզաշահագործողական հորատում	Հորատման աշտարակի մոնտաժող
		Հորատման աշտարակի մոնտաժող-եռակցող
		Հորատման աշտարակի մոնտաժող-էլեկտրամոնտաժող
		Հորատող սարքավորման մեքենավար
1000	**Էներգետիկա**	

1001	Էլեկտրասարքավորումների արտադրություն	Էլեկտրական մեքենաների էլեմենտներ փաթաթող
		Էլեկտրական մեքենաների և ապարատների հավաքող
1002	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	Էլեկտրասարքավորումների նորոգման և սպասարկման էլեկտրամոնտաժող
1003	Մեքենաների և մեխանիզմների Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	Էլեկտրասարքավորումների նորոգման փականագործ-էլեկտրիկ
		Վերելակների էլեկտրամեխանիկ
		Առևտրային և սառեցնող սարքավորումների էլեկտրամեխանիկ
		Էլեկտրական վերելակներ մոնտաժող
1004	Էլեկտրակայանների և ցանցերի տեխնիկական սպասարկում	Արտագնագործարարական բրիգադի էլեկտրամոնտաժող
		Ենթակայաններ սպասարկող էլեկտրամոնտաժող
		Ռելեային պաշտպանության սարքավորումներ և ավտոմատիկա նորոգող էլեկտրամոնտաժող
		Բաշխիչ ցանցերի շահագործման էլեկտրամոնտաժող
1005	Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկում	Դետալներ և սարքեր փորձարկող
		Էլեկտրական մեքենաների, ապարատների և սարքերի հավաքման հսկիչ
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում	Կաթսաների մեքենավար
		Կաթսայատան օպերատոր
		Կաթսայատներ սպասարկող փականագործ
		Ջերմային ցանցեր սպասարկող փականագործ
		Կաթսայատների սարքավորումներ նորոգող փականագործ
		Ջերմային ցանցերի սարքավորումներ նորոգող փականագործ
1007	Էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում	Բաշխիչ սարքերի և երկրորդային շղթաների էլեկտրամոնտաժող
		Էլեկտրասարքավորումների, ուժային և լուսավորող ցանցերի էլեկտրամոնտաժող
1100 Մետաղամշակում		
1103	Մետաղամշակման արտադրության և նյութամշակման տեխնոլոգիա	Մետաղ և համաձուլվածքներ հալող
		Կաղապարող
		Փայտե մոդելներ մոդելավորող
		Ձուլող
1105	Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ	Մուրճով և մամլիչով աշխատող դարբին
		Դարբին-դրոշմող
		Ձեռքով կռող դարբին
		Դարբնամամլային սարքավորումների կարգավորող
		Դրոշմող
1200 Մեքենաշինական սարքավորումներ և տեխնոլոգիաներ		
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	Գազաեռակցող
		Եռակցման աշխատանքների հսկիչ
		Էլեկտրաեռակցող
		Ավտոմատ և կիսաավտոմատ մեքենաների էլեկտրաեռակցող
		Ձեռքով եռակցման էլեկտրաեռակցող
		Գազաեռակցմամբ կտրող

1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	Հաստոցային և փականագործական աշխատանքների հսկիչ
		Հաստոցների և կայանքների ավտոմատ և կիսաավտոմատ գծերի օպերատոր
		Ծրագրային ղեկավարմամբ հաստոցների օպերատոր
		Լայն պրոֆիլի հաստոցավար
		Խառատ
		Ֆրեզող
		Հղկող
		Խառատ-ներտաշող
1211	Սարքավորումների տեխնիկական շահագործում	Ավտոմատ գծերի և ագրեգատային հաստոցներ կարգավորող
		Ծրագրային ղեկավարմամբ հաստոցներ և մանիպուլյատորներ կարգավորող
		Փականագործ-գործիքագործ
		Մեխանիկական հավաքման աշխատանքների փականագործ
		Փականագործ-վերանորոգող
1900 Ընդհանուր և հատուկ նշանակության սարքեր		
1902	Ժամացույցների արտադրության տեխնոլոգիա և նորոգում	Ժամացույցների և քարերի արտադրության հսկիչ
		Ժամացույցների հավաքովի բաղադրիչներ հավաքող
		Ժամացույցներ հավաքող
		Ժամագործ (մեխանիկական ժամացույցների նորոգման)
		Ժամագործ (էլեկտրոնային և կվարցային ժամացույցների նորոգման)
1903	Չափիչ-ստուգիչ սարքերի և ավտոմատիկայի տեխնիկական շահագործում	Չափիչ-ստուգիչ սարքերի և ավտոմատիկայի փականագործ
1908	Օպտիկամեխանիկական արտադրության սարքավորումներ և տեխնոլոգիա	Օպտիկական դետալների և սարքերի հսկիչ
		Օպտիկ
2000 Ռադիոէլեկտրոնային տեխնիկա և հեռահաղորդակցություն		
2002	Ռադիոէլեկտրոնային արտադրության տեխնոլոգիական սարքավորումների կարգաբերում	Փորձարկման սարքավորումների կարգավորող-մոնտաժող
		Տեխնոլոգիական սարքավորումների կարգավորող
2003	Ռադիոէլեկտրոնային սարքավորումների և սարքերի արտադրության տեխնոլոգիա	Ռադիոէլեկտրոնային սարքավորումների ապարատների և սարքերի հսկիչ
		Ռադիոէլեկտրոնային սարքավորումների ապարատներ և սարքեր մոնտաժող
		Ռադիոէլեկտրոնային սարքավորումների ապարատներ և սարքեր կարգավորող
		Ռադիոէլեկտրոնային սարքավորումների ապարատների և սարքերի փականագործ
2009	Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում	Մալուխագործ-զոդող
		Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժող
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում	Ռադիոհեռուստատեսային սարքավորումներ սպասարկող և նորոգող ռադիոմեխանիկ
		Հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ցանցերի սպասարկման ռադիոմոնտաժող

2015	Փոստային կապ	Կապի օպերատոր
		Հեռագրիչ
2200 Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա		
2201	Էլեկտրոնային և միկրոէլեկտրոնային տեխնիկայի արտադրության տեխնոլոգիա	Միկրոռեակցման օպերատոր
		Դիֆուզիոն գործընթացների օպերատոր
		Էլեկտրոնային տեխնիկա հավաքող
2203	Համակարգիչների շահագործում	Համակարգիչների օպերատոր
2204	Էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում	Էլեկտրոնային հաշվողական մեքենաներ սպասարկող և նորոգող էլեկտրամեխանիկ
2300 Սպասարկում		
2302	Հյուրանոցային տնտեսություն	Սպասուհի
		Պորտյե
2303	Հագուստի քիմիական մաքրում և ներկում	Քիմիական մաքրման ապարատավար
		Լվացքատան օպերատոր
		Լվացքի մեքենաների օպերատոր
2304	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում	Մատնահարդար
		Դիմահարդար
		Վարսահարդար
		Մերսող
2305	Լուսանկարչություն	Համակարգչային գրաֆիկայի օպերատոր
		Մինիլուսանկարչատան օպերատոր
		Ֆոտոլաբորանտ
		Լուսանկարիչ
		Լուսանկարիչ-ձևավորող
2308	Կինոֆիկացում	Կինոմեխանիկ
2311	Հասարակական սնունդ	Բարմեն
		Բուֆետապան
		Հրուշակագործ
		Խմորեղենի խոհարար
		Մատուցող
		Խոհարար
		Մանկական սննդի խոհարար
2400 Տրանսպորտային միջոցներ		
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	Տրոլեյբուսի վարորդ
		Տաքսի ծառայության ենթակարգավորող
		Մետրոյի էլեկտրագնացքի մեքենավար
		Էլեկտրաշարժակազմի նորոգման փականագործ
		Ավտոմեքենայի վարորդ
		Ավտոմեքենաների նորոգման փականագործ
		Շարժիչների փորձարկող
		Ավտոէլեկտրիկ
		Ավտոդողեր վերանորոգող
		Ճոպանուղու սպասարկող
2403	Էլեկտրամատակարարում երկաթուղային տրանսպորտում	Միացման ցանցերի էլեկտրամոնտաժող
		Քարշիչ ենթակայանների էլեկտրամոնտաժող
2404	Երկաթուղային տրանսպորտի քարշային շարժակազմի շահագործում և նորոգում	Դիզելային գնացքի մեքենավարի օգնական
		Ջերմաքարշի մեքենավարի օգնական

		Էլեկտրաքարշի մեքենավարի օգնական
		Էլեկտրագնացքի մեքենավարի օգնական
2405	Երկաթուղային տրանսպորտի շարժակազմի շահագործում և նորոգում	Վագոններ զննող
		Վագոններ զննող-վերանորոգող
		Գնացքի էլեկտրամեխանիկ
2406	Երկաթուղու և գծային տնտեսության շահագործում	Գծային ճանապարհների մոնտաժող
		Գծային մեքենաների և մեխանիզմների վերանորոգման փականագործ
2407	Փոխադրումների սպասարկում երկաթուղային տրանսպորտում	Գանձապահ-տոմսավաճառ
		Բեռներ և ուղեբեռներ ընդունող-հանձնող
		Մարդատար վագոնի ուղեկցող
		Փոխադրական փաստաթղթերի սակորոշող
2500 Քիմիական արտադրություն		
2503	Էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիա	Գալվանագործ
		Ավտոմատ և կիսաավտոմատ գծերի օպերատոր
2505	Նավթի, նավթամթերքների վերամշակում և մայրուղային խողովակատարների սպասարկում	Օդամղիչ սարքերի մեքենավար
		Պոմպակայանային սարքավորումների մեքենավար
		Տեխնոլոգիական կոմպրեսորների մեքենավար
		Տեխնոլոգիական պոմպերի մեքենավար
		Տեխնոլոգիական սարքերի օպերատոր
		Տեխնոլոգիական սարքերի նորոգման փականագործ
		Գոլորշացման ապարատավար
		Հատիկավորման ապարատավար
		Չորացնող ապարատավար
		Լուծազատման ապարատավար
		Աղացող ապարատավար
		Քիմիական արտադրության մեջ հեռակառավարման վահանակի օպերատոր
2506	Սինթետիկ խեժերի, պլաստմասսաների արտադրություն և դրանց վերամշակում	Պլաստմասսա ձուլող
2507	Քիմիական մանրաթելերի արտադրության տեխնոլոգիա	Ապարատավար (քիմիական մանրաթելերի ստացման)
		Տեխնոլոգիական պրոցեսների և արտադրանքի որակի հսկիչ
		Քիմիական մանրաթելերի ոլորման ու ձգման օպերատոր
		Թելի վերափաթաթող
2508	Ապակեթելային նյութերի արտադրություն և ապակու արտադրության տեխնոլոգիա	Ապակեթելային նյութերի մշակման ապարատավար
		Ապակե մանրաթելերի և ապակե պլաստիկ նյութերի արտադրության հսկիչ
		Ոլորող սարքավորումների օպերատոր
		Ապակաթել քանդող
		Փչելով ապակե իրեր պատրաստող
		Ապակի և ապակե նյութեր փայլեցնող
		Ապակի և ապակե նյութեր հղկող
2511	Ավտոդողերի արտադրություն, վերականգնում և նորոգում	Անվադողեր հավաքող
2600 Անտառային տնտեսություն		

2601	Անտառային համալիրի սարքավորումների տեխնիկական շահագործում	Փայտամթերման սարքավորումների նորոգման փականագործ
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	Կահույքի զարդային էլեմենտներ պատրաստող
		Կահույքագործ
		Ձևանմուշի պատրաստող
		Սղոցանյութի մշակման սարքավորումների և գծերի օպերատոր
		Փայտե իրերի հարդարող
		Շրջանակագործ
		Փայտամշակման հաստոցների հաստոցավար
2604	Անտառային տնտեսություն	Անտառահատ
		Անտառապահ
		Անտառաբույծ
2605	Պարտեզապուրակային շինարարություն	Կանաչապատող-ծաղկաբույծ
		Այգեգործ
2700 Պարենամթերքի արտադրություն		
2701	Պարենարդյունաբերության սարքավորումների տեխնիկական շահագործում	Սառեցնող սարքավորումների մեքենավար
		Սննդարդյունաբերության սարքավորումների կարգավորող
2702	Հացաթխման արտադրության տեխնոլոգիա	Թթխմորող
		Թթվեցնող
		Խմորիչ մեքենաների մեքենավար
		Հացթուխ
		Հունցող
		Խմորի ձևավորող
2703	Շաքարի արտադրության տեխնոլոգիա	Գոլորշացման ապարատավար
		Ճակնդեղի հյութի դեֆեկոսատուրացիայի ապարատավար
		Դիֆուզիայի ապարատավար
2704	Գինեգործություն և հյութերի արտադրություն	Գինեգործ
		Գինեգործության և հյութերի նախնական արտադրության վարպետ
		Հյութերի և օշարակների արտադրության օպերատոր
2705	Կենդանական հումքի նախնական վերամշակում	Անասնասպան
		Մսեղիք ջղազերծող
		Միս և մսամթերքներ աղապատող
		Մորթիներ աղապատող
		Բնական երշիկային թաղանթի պատրաստող
		Մորթափառ մաքրող
		Մսեղիքը մսաթափ անող
		Մսեղիք կտրատող
		Մսագործ
		Ենթամթերք ընտրող
		Մորթու տեսակավորող
		Մորթու աղաջրող
2708	Մսամթերքի արտադրություն	Մսամթերքի ջերմային մշակման ապարատավար
		Ենթամթերքի ջերմային մշակման ապարատավար
		Մսային կիսաֆաբրիկատներ պատրաստող

		Եփած երշիկեղենի արտադրության ավտոմատացված գծի օպերատոր
		Նրբերշիկի արտադրության ավտոմատացված գծի օպերատոր
		Աղացած մսի պատրաստման գծի օպերատոր
		Միս աղացող
		Երշիկեղենի ձևավորող
		Թռչնամսից կիսաֆաբրիկատներ պատրաստող
		Թռչնամսի մսաթափ անող
		Թռչնի մսեղիք մշակող
		Ճագարի մսեղիք մշակող
		Թռչնի և ճագարի մսեղիքներ տեսակավորող
2709	Ձկնեղենի վերամշակման տեխնոլոգիա	Ձկներից պատրաստված մթերքների խոհարար
		Ձկնամթերքի մշակող
		Ծխահարող սարքավորման օպերատոր
2710	Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա	Պաստերացման ապարատավար
		Չոր կաթնային մթերքների արտադրության ապարատավար
		Սուբլիմացիոն սարքավորման ապարատավար
		Մթերքների գոլորշացման, խտացման ապարատավար
		Պաղպաղակ պատրաստող
		Կաթնաշոռ պատրաստող
		Յուղագործ
		Կաթնային և կաթնաթթվային մթերքների արտադրության վարպետ
		Թթվակաթնային և մանկական կաթնային մթերքների արտադրության օպերատոր
		Պարենային մթերքների գծային արտադրության օպերատոր
		Պանրագործ
2711	Հրուշակեղենի տեխնոլոգիա	Եփող
		Բիսկվիտներ պատրաստող
		Վաֆլիներ պատրաստող
		Դրաժեներ պատրաստող
		Կարամել պատրաստող
		Կոնֆետներ պատրաստող
		Մարմելադային մթերքներ պատրաստող
		Կշռաբաշխիչ-փաթեթավորող մեքենաների մեքենավար
2800 Թեթև արդյունաբերություն		
2801	Կտորեղենի արտադրության տեխնոլոգիա	Հանգուցագործող մեքենայի օպերատոր
		Պատրաստի արտադրանքի վերականգնող
		Ջուլհակ
2802	Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա	Գործող
		Մանող
		Գործող սարքավորումների օպերատոր
		Որակի հսկիչ
		Սանդերքազգիչ սարքավորումների օպերատոր
		Փաթաթող սարքավորումների օպերատոր
		Ժապավենային սարքավորումների օպերատոր
		Ոլորող սարքավորումների օպերատոր

		Գզիչ սարքավորումների օպերատոր
		Ձգող սարքավորումների օպերատոր
		Ենթավարպետ
		Հյուսող
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	Հագուստի ձևարար
		Նյութերի, իրերի և ձևվածքների (լեկալների) հսկիչ
		Գլխարկներ մոդելավորող
		Կարի սարքավորումների օպերատոր
		Դերձակ
		Ձևվածքներ (լեկալ) բաշխող
		Ձևարար
		Հագուստներ ջերմամշակող
		Կարող
		Կարի մեքենա հավաքող
2811	Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա	Իրերի, կիսաֆաբրիկատների և նյութերի հսկիչ
		Դետալներ, կիսաֆաբրիկատներ և իրեր մշակող
		Հոսքագծի օպերատոր
		Իրեր կարող
		Նյութերի ձևարար
		Կաշվե գալանտերեայի իրեր հավաքող
2814	Պոլիգրաֆիական արտադրությունների տեխնոլոգիա	Գրքի արտադրության ավտոմատ գծերի մեքենավար
		Էլեկտրոնային շարվածքի օպերատոր
		Կազմարար
		Հարթ տպագրության տպագրիչ
		Սրբագրիչ
		Պոլիգրաֆիական սարքավորումներ կարգավորող
2818	Կոշիկի արտադրության տեխնոլոգիա	Կոշկեղենի վրաքաշող
		Անհատական պատվերների կոշկակար
		Օրթոպեդիական կոշիկի կոշկակար
		Կոշկակար
		Ձևող սարքավորումների օպերատոր
		Կոշիկի հավաքող
2900 Շինարարություն և կենցաղային տնտեսություն		
2901	Վերամբարձ-տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում	Ավտոկռունկավար
		Կռունկավար
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում	Ամրանագործ
		Բետոնագործ
		Որմնադիր
		Շինարարական կառուցվածքներ մոնտաժող
		Հնոցապան
		Կամրջագործ
2903	Շինարարական մեքենաների և մեխանիզմների մոնտաժում և կարգաբերում	Շինարարության փականագործ
2904	Վերականգնողական աշխատանքների իրականացում	Զարդային-գեղարվեստական որմնանկարներ վերականգնող
		Զարդային ծեփի և ծեփված իրերի վերականգնող
		Փայտե հուշարձաններ վերականգնող
		Քարե հուշարձաններ վերականգնող
		Փայտե ստեղծագործություններ վերականգնող
		Քարե ստեղծագործություններ վերականգնող

2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում	Բուլդոզերավար
		Էքսկավատորավար
		Ճանապարհաշինարարական մեքենաների և տրակտորների վերանորոգման փականագործ
		Տրակտորիստ
2906	Տանիքագործական աշխատանքների իրականացում	Թիթեղագործ
		Մետաղական տանիքների տանիքագործ
		Տանիքագործ
2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքեր	Մանրահատակագործ
		Հյուսն, ատաղձագործ
		Ապակեգործ
		Եվրոդոներ և եվրոպատուհաններ հավաքող
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	Երեսապատող-սալիկապատող
		Սինթետիկ նյութերով երեսապատող
		Երեսապատող-մարմարագործ
		Խճանկարիչ
		Ծեփագործ
		Ներկարար
2912	Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ	Սանիտարատեխնիկական համակարգերի և սարքավորումների մոնտաժող
		Օդափոխման և պնևմատրանսպորտի մոնտաժում
		Սանիտարատեխնիկական համակարգերի հանգույցների և դետալների փականագործ
		Փականագործ-սանտեխնիկ
2913	Տեխնոլոգիական սարքավորումների, խողովակատարների և մետաղական կառույցների մոնտաժում	Արտաքին խողովակաշարեր մոնտաժող
		Տեխնոլոգիական սարքավորումներ և դրանց հետ կապված կառուցվածքներ մոնտաժող
		Մետաղական կառուցվածքների հավաքման փականագործ
2915	Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում	Գազային սարքավորումների շահագործման և նորոգման փականագործ
		Ստորգետնյա գազատարների շահագործման և նորոգման փականագործ
3100 Գյուղատնտեսություն		
3103	Անասնաբուծական մթերքների արտադրություն	Անասնաբույծ
		Անասնապահական համալիրների և մեքենայացված ֆերմաների օպերատոր
		Մեքենայացված կթի օպերատոր
		Թռչնաբուծական ֆերմաների օպերատոր
		Խոզաբուծական համալիրների և մեքենայացված ֆերմաների օպերատոր
		Թռչնաբույծ
		Խոզաբույծ
3105	Մեղվաբուծություն	Մեղվաբույծ
3106	Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում	Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ
		Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար
3108	Բուսաբուծական մթերքների արտադրություն	Բանջարաբույծ
		Այգեգործ

3112	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	Ֆերմեր, գյուղատնտես
3200 Շրջակա միջավայրի պահպանություն		
3201	Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում	Կեղտաջրերի մաքրման ապարատավար
		Քիմիական ջրամաքրման ապարատավար
3202	Հրդեհաշիջում	Հրշեջ
3203	Նախազգուշացնող և հակահրդեհային ազդանշանային համակարգի մոնտաժում և շահագործում	Նախազգուշացնող և հակահրդեհային ազդանշանային համակարգի մոնտաժող
3204	Հրշեջ-փրկարարական հատուկ տեխնիկայի շահագործում	Փրկարարար-վարորդ
		Մոտորանավակավար-փրկարար
3205	Հրշեջ-փրկարարական հատուկ տեխնիկայի նորոգում	Փականագործ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1254-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՎԱՐՊԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ) ՁԵՎԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) (այսուհետ՝ վարպետային ուսուցում) կազմակերպումն ու իրականացումը:

II. ՎԱՐՊԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

2. Վարպետային ուսուցումը մասնագիտական կրթության բնագավառում համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն ուսուցանողի և ուսանողի միջև իրականացվում է անհատական ուսուցման ժամանակացույցի հիման վրա:

3. Վարպետային ուսուցում կարող են կազմակերպել մասնագիտական ուսումնական հաստատությունները (այսուհետ՝ ուսումնական հաստատություն), կազմակերպությունները, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորները (այսուհետ՝ վարպետներ), որոնք ունեն նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացման լիցենզիա:

4. Վարպետային ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրի բովանդակությունը, ըստ մասնագիտությունների և նրանց որակավորումների, որոշվում է այդ մասնագիտությունների և նրանց որակավորումների համար սահմանված պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

5. Վարպետային ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերն իրականացվում են ուսուցման այնպիսի ձևերով, որոնք տարբերվում են ուսուցման այլ ձևերից (առկա, հեռակա, դրսեկությամբ, հեռավար) ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով, դասավանդման մեթոդներով, ուսուցման տեխնոլոգիաներով, ուսանողի հետ վարպետի և դասախոսի աշխատանքի պարտադիր պարապմունքների ծավալով ու հարաբերակցությամբ:

6. Տվյալ մասնագիտության որակավորման գծով վարպետային ուսուցման պարտադիր պարապմունքների ծավալը և դրանց ուսուցման տևողությունը որոշվում է պետական կրթական չափորոշիչի պահանջներին համապատասխան:

III. ՎԱՐՊԵՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Վարպետային ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքը տվյալ մասնագիտության որակավորման ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերն են, որոնք կազմվում են տվյալ մասնագիտության որակավորման պետական կրթական չափորոշիչի հիման վրա:

8. Տվյալ մասնագիտության որակավորման վարպետային ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրերին համապատասխան, որոնց բոլոր պահանջները կատարած ուսանողին ամփոփիչ ատեստավորման հիման վրա հանձնվում է համապատասխան ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ և դրա ներդիրը:

9. Վարպետային ուսուցման գործընթացը կազմակերպվում է ուսումնական հաստատության, կազմակերպության տնօրենի կամ վարպետի կողմից հաստատված և ուսանողի հետ համաձայնեցված ուսուցման ժամանակացույցին համապատասխան:

10. Վարպետային ուսուցումը կարող է իրականացվել ուսումնական հաստատությունում, կազմակերպությունում կամ վարպետի արհեստանոցում:

11. Տվյալ մասնագիտության որակավորման ուսումնական պլանում ընդգրկված յուրաքանչյուր առարկայի գծով յուրաքանչյուր ուսանող հանձնում է նախատեսված ստուգարքները, քննությունները կամ մոդուլները՝ դրանց համար սահմանված գնահատման կարգով: Առանձին վարպետների մոտ սովորող ուսանողներն ընդհանուր մասնագիտական և ոչ մասնագիտական առարկաների ուսումնասիրումն ու ընթացիկ և ամփոփիչ ատեստավորումն անցկացնում են այն ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում, որոնց հետ պայմանագրային սկզբունքով համագործակցում է վարպետը:

12. Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգավորումն իրականացվում է ուսումնական հաստատության կամ կազմակերպության վարչական աշխատողների, դասախոսների և վարպետների կողմից:

13. Վարպետային ուսուցման ուսումնական պլանում նախատեսված դասընթացների և (կամ) մոդուլների ուսուցումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) արհեստանոցում՝ վարպետի և ուսանողի անմիջական հաղորդակցման միջոցով.

2) լսարանում՝ դասախոսի և ուսանողի անմիջական հաղորդակցման միջոցով.

3) ուսումնական նյութերի հետ ուսանողի ինքնուրույն աշխատանքի միջոցով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**